

ազատությունն ու բարեգլուխությունը, պրոլետարիատն էր ու նրա կուսակցությունը, որոնցից մեկը սակայն թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում պատմական կոնկրետ պատճառներով դեռ թույլ էր ձևավորված, իսկ մյուսը չէր առաջացել» (250)։ Չնայած այդ ամենին, երիտթուրքերի կառավարման տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի էին ունենում հայ ու այլ ժողովուրդների ինքնաբերական ու տարբերային համատեղ ելույթներ, կատարվում համագործակցության որոշ փորձեր։ Իրենց մշտողների ու կեղեքողների դեմ համատեղ հանդես էին գալիս հայերը, քրդերը, թուրքերը, ասորիները, հույները և ուրիշներ։ Նրանք պայքարում էին իշխանությունների, ազայական ավազակային հորդանների դեմ, պաշտպանում էին իրենց ու հարևանների ունեցվածքը, թույլ չէին տալիս թուրք պաշտոնյաներին պղտորելու իրենց հարաբերությունները։ Նրանց այդ պայքարը մի շարք դեպքերում հաջողությամբ էր պսակվում։ Սակայն, նշում է հեղինակը, «պատմական կոնկրետ պայմանների հետևանքով այդ ժողովուրդներին տարանջատող ուժերն ավելի հզոր դուրս եկան քան միավորողը։ Այդ պատճառով էլ նրանք... չկարողացան միասնական ձևկատ ստեղծել իրենց մշտողների ու կեղեքողների դեմ և համընդհանուր ուժերով տապալել նրանց լուծը» (255)։

Այդպիսով, Ա. Համբարյանի աշխատությունը պատկերում է այն հասարակական-քաղաքական մթնոլորտը, որ տիրում էր Արևմտյան Հայաստանում՝ մեծ հզեղի նախադրյալին։ Ղեկավարվելով պատմական երևույթների ուսումնասիրման մարքա-լենինյան մեթոդոլոգիայով, հեղինակը կարողացել է գիտականորեն մեկնաբանել ոչ միայն արևմտահայ, այլև քրդական ու ասորական շարժումների բարդ ու խրթին պրոբլեմները։ Աշխատությունը գրված է հարուստ փաստական հենքի վրա, կուտ տրամաբանությամբ։ Այն, անշուշտ, լուրջ ներդրում է մեր պատմաազգիական մեջ։ Սակայն աշխատության մեջ տեղ են գտել որոշ թերություններ։ Մեր կարծիքով ավելի լավ կլիներ, եթե արևմտահայերի ներգաղթի ու արտագաղթի հարցերը լուսարանում էին մի տեղում։ Աշխատությունը կշահեր նաև, եթե օգտագործվեին օտարալեզու աղբյուրներ։ Ցավոք, հեղինակը չի օգտագործել Գ. Զոհրապի «Հայկական հարցը վաղեմագրերի լույսի տակ» արժեքավոր աշխատությունը, որը հրատարակվել է Փարիզում, Ֆրանսերեն, 1913 թ.։

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Ս. Ա. ԴԱԼՍՏՅԱՆ, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1978, 325 էջ։

Հայտնի է, որ լեզվի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից մեկն էլ ածանցումն է։ Այն թե ինչու մեր մայրենի լեզվի ածանցների ուսումնասիրությունը շարունակ գտնվել է լեզվաբանների ուշադրության կենտրոնում։ Գրաբարի զրկթն բոլոր բերականների աշխատություններում բնական է լեզվի բառապաշարի հարստացման այդ կարևորագույն միջոցի ժամանակակից հայերենի ածանցների ամենաբազմակողմանի ու գիտական ուսումնասիրությունը կատարել և ականավոր լեզվաբան, պրոֆեսոր Մ. Արեղյանը։ Նա իր «Հայոց լեզվի տեսություն» (Երևան, 1931 թ.) աշխատության մեջ բնութագրում է մեր լեզվի ածանցների, նրանց ծագման, դասակարգման, սառուղարանման, ինչպես նաև ածանցման հետ կապված ամենաբազմազան հարցեր։ Մ. Արեղյանից հետո այս ուղղությամբ թեև բավական աշխատանք է կատարվել (Հ. Անտոյան, Գ. Սևակ, Ա. Մուրվալյան, Ս. Էլոյան և ուրիշներ), սակայն բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Գալստյանի ներկա մենագրությունը արդի հայերենի ածանցների համաթմանակա բնությունն է կառուցված լայն մակարդակով։ Ս. Գալստյանից առաջ հայերենի ածանցների նման մեթոդով բնությունների հանդիպում ենք Գ. Զահուկյանի, Է. Աղայանի, Է. Թումանյանի և Տ. Ավետիսյանի ուսումնասիրություններում։ Ս. Գալստյանը, հետևելով հարցը իրենից առաջ ուսումնասիրողների սկզբունքներին ու գրույթներին, հնարավորություն է ունեցել էլ ավելի խորամուխ լինել լեզվական կառուցվածքների մեջ, լիովին բացահայտել դրանց ամենաէական ու գիտության համար կարևոր նշանակություն ունեցող կողմերը, ճշգրտորեն ձևակերպել ուսումնասիրության արդյունքները։

Աշխատանքը հիմնականում կատարված է կառուցվածքային մեթոդներով, բայց հեղինակը նարազատ է մնացել ավանդական տերմինաբանությանը և տերմինների ավանդական իմաստներին։

Ս. Գալստյանի աշխատանքը կատարված է համաժամանակյա մակարդակով. որպես ուսումնառություն չափազանց են արդի հայերենի բառարաններից, նոր ու նորագույն գրականություններից և մամուլից բարտադրված ածանցավոր բառերը: Ուսումնասիրությունն սկսվում է ածանցական կաղապարների թնոթյամբ: Նախ ցույց է տրվում, որ բարդ բառերի բաղադրիչների իրար նկատմամբ ունեցած շարահյուսական հարաբերությունները հիմնականում համընկնում են առանձին բառերի՝ իրար նկատմամբ ունեցած շարահյուսական հարաբերություններին (սարայանց և սարի լանջ, նրբերանգ և նուրբ երանդ, արագաբայլ և արագ քալ և այլն):

Հեղինակն իր մենագրությունը սկսում է բառակազմության պարզագույն, այսինքն երկանդամ կառուցվածքներից և աստիճանաբար գնում դեպի բարդը՝ եռանդամ, քառանդամ, հնգանդամ և այլն: Հայերենի խոսքի մասերը նշանակելով լատինական տառերով՝ Ն—դուական, Ա—աժական, Վ—բայ, Լ—մակբայ, լեզվաբանը կազմում է աղյուսակները և բերում նախ նույն կամ տարբեր խոսքի մասերի արմատներից կազմվող բարդ բառերի կաղապարները, ապա այդ ստացվածը զուգորդում է ածանցման կաղապարներին: Նա իրավացիորեն թվական և դերանուն արմատները չի դնում կաղապարավորման ստի, որովհետև թվականները մշտապես ածականական կիրառություններ ունեն, այդ պատճառով էլ դրանցով կազմված կապակցությունները թնոթում է ածական-գոյական (ԱՆ) կաղապարի տակ, իսկ դերանունների հարցում՝ ելնում է Մ. Արեղյանի տեսանկյունից. դրանց մի մասը դիտում է որպես գոյականներ, մյուս մասը՝ ածականներ, երրորդը՝ մակբայներ և դրանք թնոթում է համապատասխան կաղապարների հետ (տե՛ս էջ 25, 29). այս հարցում, սակայն, պետք է որոշ վերապահումներ անել:

Որպես աշխատանքի ելակետ Ս. Գալստյանը սկսում է երկու արմատից կազմված բառաղաղորմաններից և ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում տեսականորեն կարելի է կազմել 16 կաղապար (նույն և տարբեր խոսքի մասերի զուգորդումներով), սակայն դրանցից այժմ դործնականորեն կիրառելի են միայն 10-ը, որոնցից ամենաարտադրականներն են՝ ածական-գոյական—ԱՆ (նրբերանգ, սևահող, գեղարվեստ, մոլախոտ), գոյական-բայարմատ—ՆՎ (սրտացավ, շահահաս, գրագետ, մարդասեր), մակբայ-բայարմատ—ՄՎ (հեռահար, հավերժահարս, հեռատես), Հենց այստեղ էլ ասենք, որ այսպիսի դեպքերում խիստ անհրաժեշտ էին վիճակագրական հաշվումներ, որպեսզի ասվածները ավելի ստույգ ու համոզիչ լինեին: Մեր կարծիքով, հեղինակի բերած մակբայ-բայարմատ կաղապարը այնքան էլ արտադրողական չէ, դրան հակառակ ավելի արտադրողական են գոյական-գոյական $N+N$ (ծովեզր, թանաքաման, մայրացամաք), բայարմատ-գոյական $V+N$ (վառելափայտ, ննջասենյակ, վաղբուղի) կամ գոյական-ածական $N+A$ (ղխարաց, սանձարձակ, մտամոլոր) կաղապարները:

Բարդ բառերի կաղապարները տալուց հետո Ս. Գալստյանը անցնում է ածանցման հարցերին. այդ նպատակով բարդություններում ամենից առաջ առանձնացնում է եախատիպերը. այսպես՝ կիր, կրավոր, կրավորակալ, կրավորակալություն բառերի համար նախատիպը կիր արմատն է, որից էլ բաղադրված է կրավոր ածանցավոր բառը, սա էլ իր հերթին նախատիպ է կրավորակալ բաղադրյալ բառի համար, վերջինս էլ նախատիպ կարող է դառնալ իրենից բաղադրված բառի համար: Այստեղից էլ հեղինակը հետևցնում է, որ բաղադրյալ բառերում որպես նախատիպ կարող են հանդես գալ և՛ արմատները (որը կարող է նույնանալ նաև բառի հիմքի հետ), և՛ ածանցավոր ու բարդ ածանցավոր բառերը:

Բաղադրյալ բառերի կառուցվածքային վերլուծությունն առաջ տանելու համար Ս. Գալստյանը շարունակում է նշանակումները. նախատիպ արմատները նա նշանակում է B տառով, նախատիպ հիմքերը՝ S -ով, իսկ ածանցները՝ R -ով, ըստ որում՝ R_1 —գոյականակերտ ածանց, R_2 —ածականակերտ, R_3 —մակբայակերտ, R_4 —բայական, Հոգականով բարդությունների համար որպես հոգականի ցուցիչ դնում է $+$ նշանը (հեռատես— $A+V$, հեռագրասյուն— $A+N+N$, եռանկյունաձև— $ANA+$), իսկ անհոգական բարդության բաղադրիչները զուգորդվում են առանց $+$ նշանի (դասընկեր— NN , նրբերանգ— AN , արագընթաց— MV):

Հեղինակը ածանցավոր բաղադրիչների թնոթյունը սկսում է երկրաղադրիչ միավորներից (մեկ արմատից և մեկ ածանցից կազմված պարզագույն բաղադրիչներից): Գրքի 34-րդ էջում բերված տվյալները վկայում են, որ ժամանակակից հայերենում կիրառելի են արմատ-ածանց կառուցվածքի 12 տիպի կաղապարներ, որոնցում գոյականը կարող է միանալ գոյականակերտ (NR_1), ածականակերտ (NR_2), մակբայակերտ (NR_3) ածանցների հետ, այդպես էլ համապատասխանաբար ածականը՝ AR_1 , AR_2 , AR_3 և մակբայը՝ MR_1 , MR_2 , MR_3 : Իսկ բայական ածանցներին հատուկ բաժին է նվիրված (էջ 239—250):

Հենց այստեղ էլ Ս. Գալստյանը առանձին-առանձին խոսում է տեսցված 12 կաղապարների, ածանցների շնորհիվ նոր խոսքի մասերի կերտման. ինչպես նաև ածանցների ավելի կամ պակաս զործուն լինելու մասին: Վիճակագրական հաշվումները հեղինակին հանգեցրել են այն եզրակացության, որ ժամանակակից հայերենում ամենից շատ զործուն են NR_1 (հայրական, գունեղ, մետաղյա), VR_1 (մրցանակ, զործիշ, վարմունք) կաղապարները, զրանցից ավելի պակաս՝ AR_2 (շորային, իվանդոտ), VR_2 (կործանաբար, հմայիշ, շրջիկ) և ավելի քիչ զործուն՝ AR_3 և NR_3 կաղապարները:

Քանի որ հարցի պարզագույն լուծումը տրված է ավելի պարզ կառուցվածքներում, ապա բարդերը, որոնք քննվում են նույն սկզբունքով, նույնպես մատչելի են ու հասկանալի ընթերցողի համար: Օրինակ, բուլղոսիկն էլ զծվար չէ հասկանալ, որ կառկտահաւորւթյուն բազմաբաղադրիչ բառի բաղադրիչներն են՝ NR_1 , այսինքն՝ գոյական արմատին գումարվել է բայարմատ, այդ ստացված հիմքին ավելացել է գոյականակերտ ածանց, և ստացվել է հետևյալ բանաձևը՝ $(N+V)R_1$. կամ լրագրավաճառություն բառի բաղադրիչներն են՝ $NNVR_1$, իսկ բանաձևը՝ $[(N+N)+V]R_1$: Այսպիսի կառուցվածքներում հեղինակը հիշտ է նկատել, որ հաճախ հանդիպում են այնպիսի բարդություններ, որոնց կառուցվածքը մեկից ավելի ձևերով կարող է մեկնվել... նշանակում է դրանց բանաձևերը ևս պետք է տարբերվեն (էջ 43) և բերում է նման մի քանի օրինակներ. այսպես՝ քառակապակցություն բառի բաղադրիչները՝ $N+N+VR_1$ կարելի է մեկնել հետևյալ կերպ՝

ա) բառա-կապակցություն. սրա բանաձևը կլինի՝ $N + [(N + V)R_1]$

բ) բառակապակցություն. բանաձևը՝ $(N + N) + VR_1$

գ) բառակապակց-ություն. բանաձևը՝ $(N + N + V)R_1$. Ստացված բ և գ բանաձևերը կեղծ են, որովհետև հայոց լեզվում այդպիսի բառակազմություններ չկան:

Իսկ եթե միևնույն ածանցը վերաբերում է բարդության բաղադրիչներից յուրաքանչյուրին առանձին-առանձին, այդպիսի դեպքերի համար հեղինակը կաղմել է առանձին բանաձև, որը լիովին արտացոլում ու մեկնաբանում է լեզվական տվյալ երևույթը: Դիմենք թեկուզ մեկ օրինակի՝ այգեպտղաբանչաբուսաբույս բառի բաղադրիչներն են՝ $N+N+N+V+K_2$, Այս բառի բանաձևը կարտահայտվի հետևյալ կերպ.

$$\left(\begin{array}{c} N+ \\ N+ \\ N+ \end{array} \right) V \cdot R_2,$$

այսինքն՝ բայական անդամը առանձին-առանձին վերադրվում է բոլոր գոյականական արմատներին՝ $(N+V)$, իսկ այդ կապակցությանն էլ՝ ածականակերտ ածանցը՝ $(N+V)R_2$:

Գրախոսվող աշխատության երկու գլուխները նվիրված են ժամանակակից հայերենի նախածանցների և վերջածանցների քննությանը: Ս. Գալստյանի այս աշխատության առավելությունը նախորդների համեմատությամբ այն է, որ յուրաքանչյուր ածանցի վերաբերյալ կատարված է ոչ միայն մանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրություն, այլև տրված են յուրաքանչյուրի բառակազմական կաղապարները, ինչպես նաև ածանցներով բաղադրված բառերի ռեզյանուր և կոնկրետ նշանակությունները: Այս բաժնում ամենայն մանրամասնությամբ խոսվում է յուրաքանչյուր ածանցով կազմված բաղադրության նախատիպ հիմքերի և հիմքակազմության ընդհանուր առանձնահատկությունների մասին: Շատ կարևոր է ածանցների զործածության աստիճանի և շրջանակների քննությունը, որտեղ տրվում է յուրաքանչյուր ածանցի արտադրողականության աստիճանը և զործածության ոլորտը, դրա բառակազմական արմերը: Ահրաժեշտ էլ արված նաև ածանցների շնորհիվ բառերի խոսքի մասային անցումները:

Գրքում քննված են նաև ածանցման հետևանքով տեղի ունեցող նշյունափոխության հարցերը:

Համեմատաբար դժվար է նախածանցների քննության հարցը, որովհետև այստեղ հանդես են գալիս ավելի բարդ կառուցվածքներ, որոնցում կարող են լինել ոչ միայն նախածանցներ, այլև մեկ կամ մի քանի վերջածանցներ: Այսպիսի բարդ ու բազմաբաղադրիչ կառուցվածքներում հեղինակը հաջողությունների է հասել աստիճանական վերլուծությունների ճանապարհով. այսպես՝ սկսելով երկրադարիչ (մեկ նախածանց գոմարած մեկ արմատ) RB (անաղատ) կառուցվածքներից հասել է մինչև վեցից-յոթ բաղադրիչ ունեցող կառույցների քննության. օրինակ՝ անհանձնակալ— $RB(RR)$, անբաժանելիություն— $R(DRRR)$, անհատադրողաբար— $R(RBRR)$, անհատադրողականություն և այլն. այս վերջին բազմաբաղադրիչ բառի կառուցվածքային-բառակազմական բանաձևը կարտահայտվի այսպես՝ $\{R[(B+ + B)R]\}R$:

նման համեմատարար պարզ և բազմաբաղադրիչ կառուցվածքները ուսումնասիրելուց և ստուգարանելուց հետո հեղինակը հանդուժ է հետևյալ եզրակացության. «Որպես ընդհանուր օրինաչափություն կարելի է նշել, որ առավել տարածված են վերջածանցավոր կառուցվածքները, և տարածվածությունը հակադարձ համեմատական է բաղմածկությանը, այսինքն՝ ինքնին քիչ բաղադրիչներ է պարունակում տվյալ կաղապարը, այնքան այդ կառուցվածքի բառերը շատ են ու տարածված: Առավել շատ տարածված են RB և RBR կառուցվածքի բաղադրիչները» (էջ 194):

Իմ այսպես մանրամասնորեն նա քննում է հայերենի բոլոր նախածանցները և նրանցով կազմված բաղադրությունները՝ առանձնացնելով ու մանրամասնորեն վերլուծելով տարբեր խոսքի մասերի նախադասություններով կազմված բաղադրությունները. դրանցից յուրաքանչյուրի ներսում հեղինակը վերստին կատարել է աստիճանական դասակարգում:

Առավելապես հետաքրքրական է գրքի «Ածանցների հոմանիշությունը և նրանց հոմանիշային շարքերը ժամանակակից հայերենում» բաժինը. Այստեղ Ս. Գալստյանը գիտնականին հատուկ բարեխղճությամբ շոշափել է ածանցների վերաբերող բազմաթիվ հարցեր և արել մի շարք արժեքավոր դիտողություններ: Նա գիտական բարձր մակարդակով է քննել ածանցների տեղաշարժերը և միաժամանակ ցույց է տվել, որ միևնույն ածանցը օժտված է նաև տարբեր խոսքի մասեր կազմելու իմաստային հատկությամբ, այսինքն՝ բազմիմաստությամբ: Մյուս կողմից՝ տրված են տարբեր ածանցների համարժեքությունը, նրանց հոմանշային շարքերը, շեն անտեսված նաև համանուն ածանցները:

Գրախոսվող աշխատությունը շատ ավելի կշահեր, եթե հեղինակը իր եզրակացությունները փաստարկեր ու ապացույցներ ուսումնասիրությանը ընթացքում կատարած վիճակագրական հաշվումներով: Ածանցների մասին խոսելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում ածանցով բաղադրյալ բառերը բերել նախադասությունների մեջ, որպեսզի ածանցների համանունությունն ու համանիշությունը ավելի ընդգծվի: Ավելի հասկանալի կլինեին, եթե հայերեն, ճուճաբեն, լեհերեն, չեխերեն բառերը, որոնք մի դեպքում գոյական են, մյուս դեպքում՝ ածական, մի այլ դեպքում՝ մակրայ (էջ 33 և 36), բերվեին նախադասությունների մեջ: (ավելիներ, որ անգործածական բառեր չբերվեին գրքում, ինչպես՝ օճակաճ, փաճակաճ, խուճափակաճ... (էջ 75):

Ս. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» աշխատությունը արդի հայերենի ավելի քան 150 ածանցների համակողմանի ու մանրամասն քննությունն է լեզվաբանական գիտության զարգացման ժամանակակից մակարդակում: Ածանցներով բաղադրված բառերի կառուցվածքային քննությունը խորապես գիտական է ու ընդունելի: Աշխատանքի գիտական բարձր մակարդակը, պարզ ու հստակ գրելաոճը վկայում են, որ նրա հեղինակը օժտված է լեզվական փաստերը ճիշտ ընկալելու, դրանք դասդասելու և դնահատելու հմտությամբ, ինչպես նաև իր տեսակետները գիտականորեն հիմնավորելու անվիճելի կարողությամբ:

ԽԱԶԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ

Բաճաթիբական գիտությունների քնկնածու